

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼԼԻ ԷԴՈՒԱՐԴԻ

ՓՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ

<ԱՅՆՑՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱԿՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ժ. 02.07.-<<Ուսումնական գործունեության լեզուներ>>

**Մասնագիտությանը բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է ժամանակակից լեզվաբանության և թարգմանաբանության առանցքային հիմնախնդիրներից մեկի՝ փոխաբերության երևույթի համապարփակ և բազմաշերտ քննությանը: Հեղինակը փոխաբերությունը դիտարկում է ոչ թե լոկ որպես արտահայտչականության միջոց կամ ոճական հնարք, այլ որպես մարդկային ճանաչողության հիմնարար մոդել, որն ուղղակիորեն պայմանավորում է աշխարհընկալման և աշխարհի լեզվական պատկերի կանոնակարգման գործընթացները:

Լեզվի և հաղորդակցության մեջ փոխաբերության դերի նկատմամբ գիտական հետաքրքրությունն անշեղորեն աճում է՝ վերաիմաստավորվելով լեզվաբանական հարացույցերի հերթափոխի համատեքստում: Դեռևս անտիկ շրջանում Արիստոտելն այն բնորոշում էր որպես «փոփոխված իմաստով բառի տեղափոխում սեռից տեսակին, կամ տեսակից սեռին, կամ տեսակից տեսակին, կամ ըստ համանմանության» (Արիստոտել, 2010): Մինչդեռ արդի հետազոտություններում փոխաբերությունն առավելապես սահմանվում է որպես նոր գիտելիքի ձեռքբերմանն ուղղված ճանաչողական գործընթաց (Մակքորմակ, 1976): Այն դիտարկվում է որպես ճանաչողական մի մեխանիզմ, որը հանգեցնում է երկու հասկացության տիրույթների՝ թիրախ-տիրույթի և աղբյուր-տիրույթի միջև փոխհամապատասխանությունների կարգավորված համակարգի ձևավորմանը (Լակոֆ, 2010):

Բնական լեզուների հիմնարար հատկանիշներից է անվանման փոխանցումը մի օբյեկտից մյուսին, ինչն արտահայտչամիջոցների համակարգում բացահայտվում է փոխաբերության՝ որպես ինքնատիպ ոճական հնարքի միջոցով: Փոխաբերականացումը հարկ է դիտարկել որպես լեզվի կառուցվածքային էական հատկանիշ. այն «հաղորդակցման միջոց հանդիսացող լեզվի ներքին օրինաչափության հիմնական դրսևորումներից մեկն է» (Գ.Ա. Կոլչանսկի): Ընդ որում, այս երևույթը դուրս է գալիս գուտ լեզվաբանական

չըջանալեներից՝ քնութագրվելով որպես իրականության ճանաչողության և նոր իմաստների գեներացման առանցքային գործիք: Փոխաբերությունն ինտելեկտուալ այն միջոցն է, որն օգնում է աշխարհը ճանաչել կոնկրետ-զգայական մակարդակում: Ինչպես դիպուկ նկատել է Խ. Օրտեգա-ի-Գասետը. «Փոխաբերությունը երկարացնում է ինտելեկտի «ձեռքը»: դրա դերը տրամաբանության մեջ կարելի է համեմատել կարթի կամ հրացանի հետ... Այն հասանելիություն է ապահովում միայն նրան, ինչը նշմարվում է մտքի հեռավոր սահմաններում»:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ վերոհիշյալ գործառույթները փոխարացնում են միմյանց՝ հանդես գալով որպես տեքստի լեզվական հորինվածքի և գեղարվեստական պատկերավորման կարևորագույն տարրեր: Այդուհանդերձ, արդիական է մնում այն հարցադրումը, թե ինչպե՞ս հասնել տեքստի միարժեք և համարժեք ընկալմանը, երբ հեղինակն ու ընթերցողը պատկանում են տարբեր լեզվամշակութային հանրույթների և բաժանված են ոչ միայն տարածական, այլև ժամանակային հեռավորությամբ:

Այս խնդրի համատեքստում քննարկվող առենախոսության հեղինակն առաջարկում է իր կողմից մշակված թարգմանչի անհատական ոճի վերլուծության և թարգմանության ամբողջականության գնահատման ինտեգրացված մեթոդը: Այս մոտեցումը հատկապես կարևոր է, քանի որ թույլ է տալիս բացահայտել, թե ինչպես են թարգմանիչների ստեղծագործական ընտրություններն ազդում ստեղծագործության սյուժեի և բովանդակային կառուցվածքի փոխանցման (տրանսֆերի) վրա՝ ապահովելով փոխաբերությունների համարժեք թարգմանությունը:

Աշխատանքի հեղինակը կիսում է ժամանակակից լեզվաբանների այն տեսակետը, որ փոխաբերությունը եռաչափ կառույց է, որը բաղկացած է լեզվական (սեմանտիկ), մտածողական (ճանաչողական) և հաղորդակցական չափումներից: Փոխաբերության նման համապարփակ ուսումնասիրությունն ապահովում է առավել լիարժեք և խորը վերլուծություն:

Աշխատանքի *արդիականությունը* թելադրված է միջգիտակարգային մոտեցումների անհրաժեշտությամբ: Ժամանակակից լեզվաբանության մեջ փոխաբերության քննությունը դուրս է եկել գուտ բառիմաստային փոխանակության սահմաններից՝ ներառելով հոգեբանական և ճանաչողական հարթությունները: Առենախոսության *արդիականությունն* առավել ընդգծվում է թարգմանաբանական տիրույթում, որտեղ «անթարգմանելիության» խնդիրը հաճախ բախվում է հենց հեղինակային պատկերավոր

մտածողության և մշակութային յուրահատուկ կողերի վերծանման դժվարություններին: Հեղինակի կողմից առաջարկվող մեթոդաբանությունը թույլ է տալիս նորովի լուծել թիրախ լեզվում համարժեքության որոշարկման խնդիրները:

Ատենախոսության *գիտական նորույթը* կայանում է ինտեգրացված մեթոդաբանության մշակման մեջ, որը ներդաշնակորեն համադրում է հերմենևտիկական-տեքստաբանական վերլուծությունը ճանաչողական լեզվաոճաբանության հետ: Հատկանշական է հեղինակի մոտեցումը փոխաբերությանը՝ որպես տեքստի իմաստային երեք մակարդակների (տեղեկատվական, խորհրդանշային և թաքնված) բացահայտման բանալի: Առաջին անգամ փորձ է արվում համակարգել փոխաբերությունների թարգմանության ճանաչողական մեխանիզմները՝ դրանք կիրառելով Ջեյ Լոնդոնի ստեղծագործությունների զուգադիր քննության համատեքստում, ինչը հնարավորություն է տալիս վերհանել թարգմանչի ստեղծագործական ընտրության և բնագրի հեղինակի մտադրության փոխհարաբերակցությունը:

Հետազոտության *տեսական արժևքը* հիմնավորված է փոխաբերության՝ որպես հասկացութային համակարգի բաղկացուցչի վերաիմաստավորմամբ, ինչը հարստացնում է ճանաչողական լեզվաբանության և հերմենևտիկայի տեսական զինանոցը:

Կիրառական նշանակությունը անվիճելի է, քանի որ մշակված ռազմավարությունը կարող է գործնական ուղեցույց հանդիսանալ թարգմանիչների համար, օգտագործվել բուհական դասախոսությունների շրջանակներում, ինչպես նաև հիմք ծառայել արհեստական բանականության համակարգերում մեքենայական թարգմանության որակի բարելավման համար՝ շեշտը դնելով ոչ թե բառացի, այլ իմաստային-ճանաչողական համարժեքության վրա:

Հետազոտությունն օժտված է հստակ և տրամաբանական կառուցվածքով, որը թույլ է տալիս քայլ առ քայլ բացահայտել առաջադրված գիտական վարկածը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Նկրածական մատում հեղինակը հանգամանալից կերպով հիմնավորում է թեմայի ընտրությունը, սահմանում է հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթն ու արդիականությունը՝ ուրվագծելով այն խնդիրների շրջանակը, որոնք լուծվում են աշխատանքի ընթացքում:

Առաջին գլուխը («Փոխաբերությունների առաջացման ճանաչողական-ինաստատրական հիմքերը խոսքում») հանդիսանում է հետազոտության հայեցակարգային հենապունը՝ ապահովելով հուսալի և գիտականորեն հազեցած տեսական հիմք հետագա գործնական վերլուծությունների իրականացման համար: Այստեղ հեղինակը հանգամանալից քննության է ենթարկում փոխաբերության՝ որպես հասկացության ֆենոմենի էությունը՝ դուրս գալով նեղ լեզվաբանական սահմաններից և այն դիտարկելով որպես մարդկային մտածողության բարդ ու բազմաշերտ գործընթացների անբաժանելի բաղադրիչ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ատենախոսը փոխաբերությունը չի սահմանափակում սոսկ լեզվական միավորի շրջանակներում, այլ այն քննում է փոլիսոփայության, հոգեբանության և ճանաչողական լեզվաբանության միջգիտակարգային հատույթում: Անտիկ շրջանի դասական սահմանումներից դեպի արդի ճանաչողական տեսություններ կատարված հետևողական անցումը վկայում է հեղինակի համակարգված մոտեցման, մեթոդաբանական հասունության և նյութի տիրապետման բարձր մակարդակի մասին:

Ճանաչողական մեխանիզմների բացահայտման տիրույթում ատենախոսին հաջողվել է համոզիչ կերպով ներկայացնել փոխաբերականացման նյարդայլեզվաբանական հիմքերը: Հեղինակը հաջողությամբ փոխկապակցում է պատկերավոր մտածողությունը և տրամաբանական վերլուծությունը ուղեղի կիսագնդերի ֆունկցիոնալ առանձնահատկությունների հետ, ինչը թույլ է տալիս փոխաբերությունը սահմանել որպես մարդու աշխարհընկալման և իմաստավորման առանցքային գործիք: Այս համատեքստում առանձնակի արժևորվում է տեքստում փոխաբերությունների բացահայտման մեթոդաբանական գործիքակազմի հստակեցումն ու գիտական կանոնակարգումը:

Երկրորդ գլխում («Գրական դիսկուրսի հասկացության-փոխաբերական բաղադրիչը և թարգմանության տեսության մեջ կիրառելու դրա նպատակահարմարությունը») հետազոտության կենտրոնում է հայտնվում գեղարվեստական տեքստի հերմենևտիկական և լեզվաճանաչողական քննությունը: Ատենախոսը հաջողությամբ հիմնավորում է հեղինակային մտադրության (ինտենցիայի) և ոճական նշույթավորված միավորների համարժեք փոխանցման կարևորությունը թարգմանական գործընթացում:

Գնահատելի է փոխաբերության դիտարկումը ոչ թե որպես լոկ էսթետիկական «գարդարանք», այլ որպես մարդու ճանաչողական համակարգի կառուցվածքային տարր:

Հեղինակը տեղին և հիմնավորված կերպով կիրառում է Ջ. Լակոֆի, Մ. Ջոնսոնի և Ժ. Ֆոկոնյեի տեսական դրույթները՝ ցուցադրելով, թե ինչպես են հասկացության ինտեգրացիան (blending) և «տիրույթների քարտեզումը» (domain mapping) կանխորոշում թարգմանչի ռազմավարական ընտրությունը:

Հետազոտության գիտական նորույթն առավել է ամրապնդվում Է. Սեմինոյի և Պ. Ստոքվեյի մեթոդների հմուտ գործադրմամբ: Հեղինակը փաստում է, որ փոխաբերության թարգմանության համարժեքությունը պայմանավորված է «տեքստային աշխարհի» և դրա ենթաաշխարհների խորքային ըմբռնմամբ, ինչը թույլ է տալիս թարգմանչին պահպանել բնագրի գեղագիտական ներգործության աստիճանը:

Երրորդ գլուխը («Փոխաբերության թարգմանության ինտեգրացված մեթոդի կիրառումը Ջեք Լոնդոնի երկերի հայերեն թարգմանություններում») ներկայանում է որպես աշխատանքի գործնական-վերլուծական առանցքը: Ջեք Լոնդոնի ստեղծագործությունների հարուստ նյութի հիման վրա հեղինակը ապացուցում է մշակված մեթոդի կիրառելիությունը և կենսունակությունը: Իրականացված գուգադիր քննությունը թույլ է տալիս վերհանել թարգմանական համարժեքների ընտրության նրբերանգները՝ հատկապես հեղինակային և դիպվածային փոխաբերությունների վերարտադրման համատեքստում, ինչը փաստում է հետազոտության բարձր գործնական արժեքը:

Եզրակացության մեջ հեղինակը հակիրճ, բայց բովանդակալից կերպով ամփոփում է հետազոտության արդյունքները, որոնք լիովին համապատասխանում են առաջադրված նպատակներին:

Ատենախոսությունն աչքի է ընկնում կառուցվածքային հստակ տրամաբանությամբ և բաժինների ներդաշնակ համամասնությամբ, ինչը թույլ է տալիս հետազոտությունը դիտարկել որպես հայեցակարգային առումով ամբողջական, մեթոդաբանորեն հիմնավորված և ավարտուն գիտական ուսումնասիրություն:

Ընդգծելով ներկայացված հետազոտության գիտական արժեքն ու հեղինակի կողմից իրականացված ծավալուն վերլուծական աշխատանքը՝ միևնույն ժամանակ հարկ ենք համարում ներկայացնել մի շարք դիտարկումներ և հարցադրումներ, որոնք կրում են առավելապես մասնագիտական քննարկման բնույթ:

1. Աշխատանքի Լջ 71-ում ատենախոսն իրավացիորեն արձանագրում է, որ բնագրային «gauze» (շղարշ) բառը թարգմանության մեջ գեղջվել է և փոխարինվել «շատ կուրբ ևն» մակդիրով: Սակայն հարկ է նկատել, որ սա պարզապես թարգմանչական

«անհատական ոճի» դրսևորում չէ, այլ ավելի շուտ փոխաբերության *սպասփոխաբերականացում (demetaphorization)*: Բնագրում Ջ. Լոնդոնը ստեղծում է թիթեռի կամ հեքիաթային էակի տեսողական հստակ կերպար՝ հիմնված նյութականության վրա (*«finest gauze»* - նրբագույն շղարշ): Թարգմանիչը նյութական, առարկայական պատկերը վերածել է վերացական որակի (*նրբություն*), ինչի արդյունքում փոխաբերության գեղագիտական ներգործությունը զգալիորեն թուլացել է:

Բացի այդ, վերլուծության մեջ անտեսվել է բնագրի նախադասության վերջին հատվածը՝ *«dusted with the fairest pigments»* (գարդարված/ցանված նրբագույն գունանյութերով): Սա փոխաբերության կարևորագույն բաղադրիչն է, որը լրացնում է թիթեռի թևերի տեսողական պատկերը: Բանի որ թարգմանության մեջ այս հատվածը պարզապես բաց է թողնված, իսկ ատենախոսի կողմից այդ բացթողումը չի արձանագրվել, կարևոր ենք համարում անդրադառնալ այս իմաստային կորստին:

Մեկ այլ դիտարկման է արժանի *«flutter»* բառի իմաստային նրբերանգր: Բնագրում այն ասոցացվում է անկայուն, անհանգիստ կամ թույլ թռիչքի հետ: Հայերեն թարգմանության մեջ օգտագործված *«բարձր կրոնչք»* տարբերակը հաղորդում է ավելի վստահ և հաստատուն թռիչքի գաղափար, ինչը որոշակի հակասության մեջ է մտնում նախադասության հաջորդող հատվածի հետ, որտեղ շեշտվում է թևերի փխրունությունը:

Հարգելի՛ ատենախոս, Ձեր վերլուծության մեջ Դուք նշում եք, որ «gauze» բառի փոխարինումը *«շատ նուրբ են»* արտահայտությամբ թարգմանչի անհատական ոճի դրսևորումն է: Սակայն, արդյո՞ք սա չպետք է դիտարկել որպես պատկերավորության կորուստ, քանի որ առարկայական փոխաբերությունը (*«նրբագույն շղարշ»*) վերածվել է սովորական որակական մակդիրի (*«շատ նուրբ»*): Ինչպե՞ս կմեկնաբանեք այն փաստը, որ թարգմանության մեջ ամբողջությամբ դուրս է մնացել *«dusted with the fairest pigments»* պատկերավոր արտահայտությունը: Արդյո՞ք նմանատիպ գեղչումները չեն խաթարում հեղինակային մտադրությունը՝ ընդգծելու Մարտինի ներաշխարհի ոչ միայն նրբությունը, այլև դրա գուննեղ ու բազմաշերտ գեղեցկությունը, և ինչպիսի՞ն կլինեն Ձեր առաջարկված «ինտեգրացված մեթոդով» կատարված համարժեք թարգմանությունը, որը կպահպաներ թե՛ շղարշի, թե՛ գունանյութերի պատկերը»:

2. *Life was to him like strong, white light that hurts the tired eyes of a sick person. During every conscious moment life blazed in a raw glare around him and upon him. It hurt. It hurt intolerably* (London, 1916:407):

Կյանքը տանջալից էր Մարտին Իդենի համար. ինչպես պայծառ լույսը՝ հիվանդ աչքերով մարդու համար: Կյանքը փայլում էր նրա առաջ և շողշողում ծիածանի բոլոր գույներով, և նրան ցավ էր պատճառում, անտանելի ցավ (Լոնդոն, 2018:511):

Աշխատանքի 71, 72 էջերում ատենախոսը նշում է, որ հեղինակի և թարգմանչի մոտ «փոխաբերական իրացումները համընկնում են»: Սակայն այս պնդումը վիճարկելի է հետևյալ հիմնավորմամբ. բնագրում Լոնդոնն օգտագործում է «*strong, white light*» (ուժեղ, սպիտակ լույս) և «*raw glare*» (սուր լուսավորություն, կուրացնող լույս) պատկերները, որոնք խորհրդանշում են կյանքի դաժանությունը, փորձություններն ու տառապանքները՝ ձևավորելով «**ԿՅԱՆՔԸ ՑԱՎ Է**» փոխաբերական մոդելը: Թարգմանիչը, ընդհակառակը, ներմուծել է «*ծիածանի բոլոր գույներով*» արտահայտությունը, որը հայերենում օգտագործվում է մի որևէ բան շատ վառ, բազմազան ու տպավորիչ պատկերելու համար և ունի դրական իմաստ: Սա ոչ թե համընկնում է բնագրին, այլ ուղղակիորեն հակասում է դրան՝ մեղմացնելով և գունազարդելով այն տանջալից «սպիտակությունը», որը նկարագրում է հեղինակը:

Ատենախոսը նաև նշում է, որ «ցավը» այստեղ դիպվածային (occasional) փոխաբերություն է: Իրականում սա Լոնդոնի կողմից իրականացված ֆիզիկական և հոգեկան տառապանքի նույնացում է՝ *գոյաբանական փոխաբերություն (ontological metaphor)*, որտեղ էկզիստենցիալ հիասթափությունը վերածվում է նյարդերը քայքայող ֆիզիկական ազդակի:

- Դուք նշում եք, որ հեղինակի և թարգմանչի փոխաբերական իրացումները համընկնում են, սակայն բնագրային «*սպիտակ լույսը*» (*white light*), որը կուրացնում և ցավեցնում է հերոսին՝ խորհրդանշելով կյանքի դաժանությունն ու անտանելիությունը, թարգմանության մեջ վերածվել է «*ծիածանի բոլոր գույներով շողշողալուն*»:

Արդյո՞ք չէր կարծում, որ «*ծիածանի գույներով շողշողալը*» հայերենում առաջացնում է դրական գուզորդումներ, որոնք լիովին խաթարում են Լոնդոնի կողմից կառուցված «**ԿՅԱՆՔԸ ՑԱՎ Է**» փոխաբերական մոդելը: Արդյո՞ք թարգմանական նման «գունազարդումը» չի գրկում տեքստը իր հոգեբանական ու փիլիսոփայական

ենթատեստից»: Ինչպե՞ս է Ձեր առաջարկած «հասկացութային խառնուրդի մեթոդաբանությունը» բացատրում այս հասկացական հակասությունը:

3. *The months passed by. Still continued the journey of Grey Beaver. White Fang's strength was developed by the long hours on trail and the steady toil at the sled; and it would have seemed that his mental development was well-nigh complete. He had come to know quite thoroughly the world in which he lived. His outlook was bleak and materialistic. The world as he saw it was a fierce and brutal world, a world without warmth, a world in which caresses and affection and the bright sweetesses of the spirit did not exist (London, 1906:82).*

Անգամ մի քանի ամիս, իսկ Գորշ Ջրշունի ուղևորությունը ղեռ շարունակվում էր: Երկար ճանապարհը և սահնակ քաշելիս բարեխղճորեն աշխատելը ամրապնդեցին Սպիտակ Ժանիքի ուժերը, և ըստ երևույթին նրա մտավոր զարգացումն ավարտվեց: Երջասպատող աշխարհը ևս ճանաչեց ամբողջովին: Եվ նայում էր նա դրան մոայլ՝ ոչ մի պատրանք չունենալով դրա հանդեպ: Խստաշունչ ու դաժան էր այդ աշխարհը, ո՛չ ջերմություն կար այդտեղ, ո՛չ քնքշանք, ո՛չ էլ բարեկամական կապ (Լոնդոն, 2017:126):

Հաջորդ դիտարկումը վերաբերում է աշխատանքի 122-րդ էջում բերված օրինակին: Ինչպե՞ս կմեկնաբանեք բնագրի «*bright sweetesses of the spirit*» (ոգու պայծառ քաղցրություններ) բազմաշերտ և գեղեցիկ փոխաբերության փոխարինումը ուղղակի «բարեկամական կապ» արտահայտությամբ: Սա ոչ թե պարզապես հերմենևտիկական ընտրություն է, այլ պատկերավորության զգալի պարզեցում, որը զրկում է տեքստը Լոնդոնին բնորոշ հակադրությունից (դաժան կյութական աշխարհ ընդդեմ լուսավոր հոգևոր աշխարհի): Արդյո՞ք սա չի հակասում հեղինակային փոխաբերությունների ստեղծագործ բնույթի պահպանման սկզբունքին:

4. *On another night, his vigil was rewarded by a glimpse of Ruth through a second-story window. He saw only her head and shoulders, and her arms raised as she fixed her hair before a mirror. It was only for a moment, but it was a long moment to him, during which his blood turned to wine and sang through his veins (London, 1916:47).*

Մի այլ անգամ նա հանկարծ տեսավ Լուիթին երկրորդ հարկի պատուհանի առջև: Երևում էին միայն նրա գլուխը, ուսերն ու ձեռքերը, ըստ երևույթին աղջիկը սանրվում էր հայելու առաջ: 'Դա տեսց միայն մի պահ, բայց դա էլ բավական էր բորբոքելու նրա արյունը՝ կարծես գինու ազդեցության տակ (Լոնդոն, 2018:61):

Ատենախոսության 59-րդ էջում վերլուծության ենթարկված բնագրային «*blood turned to wine and sang through his veins*» կառույցը, մեր խորը համոզմամբ, ոչ թե պարզապես նկարագրական պատկեր է, այլ *գոյարսնական փոխաբերություն (ontological metaphor)*: Հեղինակը ներկայացնում է ակնթարթային սիրահարվածության այնպիսի ուժգնություն, որը փոխում է հերոսի էությունը՝ նրա արյունը վերածելով երգեցնող, հարբեցնող գինու:

Ինչպե՞ս կմեկնաբանեք այն փաստը, որ թարգմանիչը, սահմանափակվելով «*արյունը բորբոքել*» դարձվածքով և ավելացնելով «*կարծես գինու ազդեցության տակ*» համեմատությունը, փոխաբերությունը վերածել է սովորական տրամաբանական նմանեցման: Արդյո՞ք չեք կարծում, որ նման մոտեցմամբ որոշակիորեն խաթարվում է բնագրի ճանաչողական հենքը՝ հանգեցնելով ակնթարթային սիրահարվածության կախարդական ազդեցության կորստին:

5. Ձեր առաջարկած ինտեգրացված մոդելում ո՞ր մակարդակն է հանդիսանում «որոշիչ» այն դեպքում, երբ առկա է բախում *ճանաչողական համարժեքության* (իմաստային սխեմայի պահպանում) և *գործառության համարժեքության* (ընթերցողի վրա նույնպիսի էությունիկական ազդեցություն թողնելու) միջև: Ինչպե՞ս է լուծվում իմաստային էնտրոպիայի խնդիրը բարդ, բազմաշերտ փոխաբերությունների պարագայում:

6. Հարգելի՛ ատենախոս, Ձեր աշխատանքում իրականացված հասկացության ինտեգրացման և հերմենևտիկական մեկնաբանության մեթոդների կիրառումը թույլ է տվել հետաքրքիր դիտանկյունից հիմնավորել թարգմանչական լուծումների ստեղծագործական բնույթը: Այնուամենայնիվ, համադրելով բնագրի ճանաչողական պատկերավորության համակարգը և թիրախ-տեքստում առկա լեզվական իրացումները, կցանկանայի լսել Ձեր պարզաբանումը հետևյալ խնդրի շուրջ.

Արդյո՞ք թարգմանչի կողմից իրականացված իմաստային պարզեցումները կամ հասկացության գեղջումները միշտ կարող են դիտարկվել որպես «հերմենևտիկական պատշաճ ընտրություն»:

Արդյո՞ք չկա մի սահմանագիծ, որից այն կողմ հեղինակային ինքնատիպ հասկացության մոդելների նմանօրինակ ձևափոխումները կարող են հանգեցնել հեղինակի, այս դեպքում, Ձեկ Լոնդոնի ոճական ու գաղափարական շեշտադրումների որոշակի թուլացմանը թարգմանության մեջ: Եվ ինչպե՞ս եք Ձեր մեթոդաբանության շրջանակներում տարբերակում թարգմանչի «մեկնողական ազատությունը» հեղինակային պատկերի «իմաստային աղբատացման» դեպքերից:

Ամփոփելով դիտարկումները՝ անհրաժեշտ է նշել, որ ներկայացված հարցերն ու նկատառումները պարզաբանող և կառուցողական բնույթ ունեն և չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական և կիրառական բարձր արժեքը:

Ներկայացված աշխատությունը հետևողականորեն կառուցված, տեսականորեն հազնցած և մեթոդաբանորեն հիմնավորված գիտական հետազոտություն է: Այն աչքի է ընկնում միջգիտակարգային խորությամբ՝ համադրելով հերմենևտիկական մեկնաբանության, ճանաչողական պոետիկայի և թարգմանաբանության արդի հայեցակարգերը: Ատենախոսը ցուցաբերել է գիտական բարձր պատրաստվածություն՝ հաջողությամբ կիրառելով ինտեգրացված ռազմավարությունը բարդ գեղարվեստական պատկերների և փոխաբերությունների վերլուծության գործընթացում:

Հետազոտության արժանիքներից է հեղինակի կողմից առաջարկված հայեցակարգային մոդելը, որը թույլ է տալիս նորովի դիտարկել թարգմանիչ-տեքստ-ընթերցող հարաբերակցությունը և լուծել ճանաչողական անհամարժեքության խնդիրները:

Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ ատենախոսական աշխատանքը հասուն, ինքնատիպ և արդիական գիտական ուսումնասիրություն է, որն իր տեսական նորությամբ և գործնական նշանակությամբ ծանրակշիռ ներդրում է թարգմանաբանության և լեզվաբանության բնագավառում:

Ուսումնասիրված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից բանասիրական գիտությունների թեկնածուի հայցմանն առաջադրվող բարձր պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը՝ Նելլի Սարգսյանը, միանգամայն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս

բանասիրության գիտությունների որկտոր, պրոֆեսոր՝

Ն. Լ. Հարությունյան

Հաստատում եմ Ն. Հարությունյանի տոճրագրությունը

ԵՊՀ գիտական քարտուղար՝

Մ. Վ. Հովհաննիսյան

11. 05. 2026

